ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ապրիլի 2019թ. թիվ 257-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿՈՂԵՍԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 4, 7, 9, 11, 15 և 17 կետերը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Կողեսի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի և ծնողական խորհրդի նախագահի 20.03.2019թ. գրությունները և Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 20.03.2019թ. թիվ 184 գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մարտի 15-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշման հավելվածի «ՀՀ Լոռու մարզի Կողեսի հիմնական դպրոց» ՊՈԱԿ մասում՝

1. «Ներսիսյան Իրինա» բառերը փոխարինել «Վարոսյան Հայկ» բառերով, «Բաբաջանյան Նաիրա» բառերը՝ «Մամաջանյան Արմինե» բառերով, «Ներսիսյան Արայիկ» բառերը՝ «Ավետիսյան Արմեն» բառերով և «Մկրտչյան Սարգիս» բառերը՝ «Տրանդաֆիլով Արիա» բառերով:

2. Վերահաստատել մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Սոնա Ջիլավյանի, ծնողական խորհրդի կողմից առաջադրված Գոհար Դանիելյանի և համայնքի ղեկավարի կողմից առաջադրված Արսեն Մամաջանյանի թեկնածությունները:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

29/04/2019

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. ապրիլի 29
ք.Վանաձոր